ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

29 հոկտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բադալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը, Սիմոն Զախարովը, Անահիտ Սմբատյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան, Ալավերդի համայնքի Ախթալա և Ջիլիզա վարչական տարածքների ղեկավարներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերրի 29-ի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Աշխարհագրական անվանումների մասին» որոշ բնակավայրերի անվանափոխության վերաբերյալ առաջարկության մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, հիմք ընդունելով «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 18.10.2024թ. թիվ 01/107.4/08505-2024 գրությունը , ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Աշխարհագրական անվանումների մասին» որոշ բնակավայրերի անվանափոխության վերաբերյալ առաջարկությունը և բնակավայրերի վարչական ղեկավարների զեկուցագրերը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն չտալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կազմի մեջ մտնող Ախթալա քաղաքը Պղնձավան և Ջիլիզա գյուղը Խորակերտ անվանափոխելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122 - Ա/

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐՈՍՅԱՆ

ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՌԱՄԱՋՅԱՆ

ՍԵՆԻԿ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՏԵԼԵՄԱԿ ԱՂՎԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ՌԱՄԱՋՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____